

Ծանոթագրություն 1 «Իրավական դաշտ»

«ԲԼԵՍՍ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Կազմակերպություն կամ Ընկերություն) շահույթ ստանալու նպատակով հիմնադրված իրավաբանական անձ հանդիսացող առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է 19.02.2007թ-ին կայացած Կազմակերպության հիմնադիրների թիվ 1 ժողովի որոշմամբ և գրանցվել ՀՀ կենտրոնական բանկում՝ ԿԲ խորհրդի 2007թ ապրիլի 17-ի թիվ 115Ա որոշմամբ (գրանցման վկայականի համարը՝ 18), ստանալով թիվ 18 անժամկետ լիցենզիան:

Կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանում հիմնականում զբաղվել է ձեռնարկատիրական և սպառողական վարկերի տրամադրմամբ:

Կազմակերպությունը որպես հարկատու և սոց. ապահովագիր գրանցվել է Սպանդարյան-1 տարածքային հարկային տեսչությունում 2007թ-ի ապրիլի 23-ին (ՀՎՀՀ՝ 02702899), այնուհետև ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 27.11.2007թ-ի թիվ 1-06/508Ա հրամանի համաձայն հաշվառվել է ՀՀ ԿԱ ՀՊԾ Բանկերի և Վարկային կազմակերպությունների հարկային տեսչությունում, իսկ այժմ հաշվառված է ՀՀ Ֆինանսների նախարարության Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչությունում:

Կազմակերպությունը իր ծառայություններն է մատուցում գլխամասային գրասենյակի և թվով 4 մասնաճյուղերի միջոցով:

Կազմակերպության գլխամասային գրասենյակի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պողոտա, 1 շենք, թիվ 274/1 տարածք,

Կազմակերպության «Ստեփանակերտ» մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ ԱՅ, ք.Ստեփանակերտ, Մ.Մաշտոցի փողոց, թիվ 1:

Կազմակերպության «Սիսիան» մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Սիսիան, Իսրայելյանի փողոց, թիվ 33/2:

Կազմակերպության «Նոր Նորք» մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Երևան, Բաղալ Մուրադյան փողոց, 3 շենք, թիվ 71 տարածք:

Կազմակերպության «Ալավերդյան» մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Երևան, Տպագրիչների փողոց, 9 շենք, թիվ 70:

Կազմակերպության «Աջափնյակ» մասնաճյուղի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Երևան, Մարգարյան փողոց, թիվ 22/7 տարածք:

2018 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ Կազմակերպությունը ունեցել է 41 աշխատակից, որից 11-ը՝ սպասարկող անձնակազմ:

Ծանոթագրություն 2 «Հաշվապահական ստանդարտներ»

Ներքոհիշյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հաշվետու ժամանակաշրջանում կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների կազմման էական դրույթների նկատմամբ:

2.1 Ֆինանսական հաշվետվությունների կազմումը և ներկայացումը

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները կազմվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտներին համապատասխան և հաշվետվությունների ձևերը համապատասխանում են ՀՀՄՍ պահանջներին:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով (հազարների ճշտությամբ):

2.2 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Կազմակերպության գործունեության անընդհատության սկզբունքի հիման վրա, որը ենթադրում է, որ Կազմակերպության ակտիվները պետք է իրացվեն և պարտավորությունները մարվեն վերջինիս գործունեության բնականոն ընթացքում:

2.3 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ընդգրկում են դրամարկը և բանկերում գտնվող բանկային հաշիվները:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվեկշռում ճանաչվում և չափվում են ստացման հատուցման իրական արժեքով:

2.4 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են պատմական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը: Եթե հիմնական միջոցի փոխհատուցվող գումարը փոքր է դրա հաշվեկշռային արժեքից, ապա ժամանակավոր չհամարվող պայմանների արդյունքում, համապատասխան ակտիվը նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող արժեքը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով, որի հիմքում ընկած է ակտիվի օգտակար ծառայության ժամկետը: Կիրառվել են մաշվածության հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

| | Օգտակար ծառայության ժամկետ (տարի) | Դրույքաչափ (%) |
|---|--|-------------------|
| Շենքեր | 20 | 5 |
| Հաշվապահական և համակարգչային տեխնիկա | 1 | 100 |
| Այլ հիմնական միջոցներ | 5 | 30 |
| Փոխադրամիջոց | 5 | 20 |
| Վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ ներդրումները | 20 | 20 |

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակահատվածում, որում դրանք տեղի են ունեցել: Կապիտալ բնույթի վերանորոգման ծախսերը ներառվում են ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ առաջացած ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից կիսուսն դեպի Կազմակերպություն: Կապիտալ վերանորոգումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի մնացորդային օգտակար ծառայության ընթացքում:

Հիմնական միջոցների օտարումից ծախսերը և եկամուտները որոշվում են՝ համեմատելով ակտիվի օտարումից զուտ մուտքերն ու հաշվեկշռային արժեքը և ներառվում են գործառնական եկամտի մեջ:

Երբ վաճառվում են վերագնահատված ակտիվները, օտարված ակտիվին վերագրելի և վերագնահատման պահուստում ներառված գումարները վերագրվում են չբաշխված շահույթին:

2.5. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերը:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ցանակացած կուտակված արժեզրկման ծախս: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի և անորոշ: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցողները ամորտիզացվում են գծային մեթոդով 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման համար, երբ առկա են արժեզրկման հատկանիշները: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվների ամորտիզացիայի ժամանակահատվածներն ու մեթոդները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջին:

Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, բայց տարին մեկ անգամ ստուգվում են արժեզրկման համար անհատական կամ դրամային միջոցներ ստեղծող միավորի մակարդակով: Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ պարզելու համար, թե արդյո՞ք ակտիվի օգտակար ծառայության ժամկետը դեռևս անորոշ է գնահատվում:

Համակարգչային ծրագրերի պահպանմանը վերագրելի ծախսերը ծախս են ճանաչվում առաջացման պահին:

| | Օգտակար ծառայության (տարի) | Դրույթաչափ ժամկետ (%) |
|-----------------------|----------------------------------|-----------------------------|
| Համակարգչային ծրագրեր | 10 | 10 |

2.6 Վարկեր և այլ փոխառություններ

Վարկերը և այլ փոխառությունները հաշվեկշռում հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը, հանած օրենսդրությամբ սահմանված, դրանց գծով հնարավոր կորուստների ծածկման պահուստները:

2.7 Արժեզրկման պահուստ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Կազմակերպությունը գնահատում և ճանաչում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի գծով սպասվող պարտքային կորուստը ՖՀՄՍ 9 ստանդարտին համաձայն: Արժեզրկումը գնահատվում և ճանաչվում է մինչև արժեզրկման անկողմնակալ վկայության տեղի ունենալը: Սա կոչվում է սպասվող պարտքային կորուստ: Այդ իսկ պատճառով արժեզրկման վերաբերյալ գնահատումներ և դասակարգումներ արվում են ֆինանսական ակտիվի ճանաչման պահին: Արժեզրկման նպատակով կատարված դասակարգումից կախված փոխվում է նաև տոկոսային եկամտի հաշվարկը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

ՖՀՄՍ 9 ստանդարտին համաձայն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով սպասվող պարտքային կորստի հաշվարկման համար Կազմակերպությունը սահմանում է հետևյալ հասկացությունները.

“**Սպասվող պարտքային կորուստ**”՝ պարտքային կորուստների միջին կշռված մեծություն, որը հաշվարկվում է դեֆոլտի (պարտքային կորուստների) հավանականությամբ կշռման միջոցով: ՄՊԿ գնահատվում է առկա այն տեղեկատվության վերլուծության հիման վրա, որի հավաքագրումը հնարավոր է առանց անհարկի ծախսումների ու ջանքերի: ՄՊԿ գումարը պետք է արտացոլի կորուստի տեղի ունենալու հավանականությունը:

Ակտիվների պորտֆելային գնահատման ժամանակ յուրաքանչյուր ակտիվի գծով ՄՊԿ հաշվարկվում է որպես հետևյալ երեք բաղադրիչների արտադրյալ.

ա) ակնկալվող դրամական հոսքեր, բերված ներկա արժեքի սկզբնական կամ տվյալ պահին կիրառելի վերանայված արդյունավետ տոկոսադրույքով,

բ) հաջորդ 12 ամսվա կամ վարկի մնացած ժամկետի համար հաշվարկված դեֆոլտի (պարտքային կորուստների) հավանականություն,

գ) դեֆոլտային վարկերի գծով կորուստների մեծություն:

“**Դեֆոլտային վարկ**”՝ վարկ, որի գծով բավարարված է հետևյալ պայմաններից մեկը.

- վարկի տևողության ընթացքում անընդմեջ ժամկետանց օրերի թիվը կազմել է 91 կամ ավել,

- հաշվետվության օրվա դրությամբ առկա է Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված սուբյեկտիվ չափանիշներից մեկը:

“**Պարտքային ռիսկի էական ավելացում**”՝ հաշվետվության օրվա դրությամբ վարկի գծով հետևյալ հանգամանքներից մեկի առկայությունը.

- վարկի տևողության ընթացքում անընդմեջ ժամկետանց օրերի թիվը կազմել է 31-90 օր,

- գրավի արժեքի էական նվազում, երաշխավորների ֆինանսական վիճակի էական վատացում, որի մասին առկա է փաստաթղթավորված տեղեկատվություն,

- վարկառուի կամ իր բիզնեսի վերաբերյալ այնպիսի բացասական տեղեկատվության առկայություն, որը կարող է էական ազդեցություն ունենա իր ֆինանսական պարտավորությունների մարման վրա, այդ թվում՝ մակրոտնտեսական պայմանների էական վատացում,

- Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված այլ սուբյեկտիվ չափանիշներ:

“**Պարզեցված մոտեցում**”՝ մոտեցում, որը կիրառվում է առևտրային դեբիտորական պարտքերի համար: Այս դեպքում Կազմակերպությունը չի հետևում տվյալ ակտիվների գծով վարկային ռիսկի փոփոխություններին, փոխարենը՝ Կազմակերպությունը ճանաչում է կորստի

պահուստը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ ելնելով ֆինանսական ակտիվի ամբողջ ժամկետի համար հաշվարկված սպասվող պարտքային կորուստներից:

“Ցածր պարտքային ռիսկի հետ կապված պարզեցման մոտեցում”՝ մոտեցում, որը կիրառվում է այն ակտիվների համար, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ ունեն Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված արտաքին վարկանիշ: Կազմակերպությունը չի հետևում տվյալ ակտիվների գծով վարկային ռիսկի փոփոխություններին և ճանաչում է կորստի պահուստը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ ելնելով ֆինանսական ակտիվի 12 ամսվա սպասվող պարտքային կորուստներից:

“Ձեռքբերված կամ սկզբնապես արժեզրկված վարկի մոտեցում”՝ մոտեցում, որը կիրառվում է երբ ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ Կազմակերպությունը գնահատում է այն որպես սկզբնապես արժեզրկված ակտիվ:

“Ընդհանուր մոտեցում”՝ տվյալ մոտեցման շրջանակներում արժեզրկումից կորստի հաշվարկը կատարվում է եռափուլ գործընթացով, որն արտահայտում է ակտիվի պարտքային ռիսկի փոփոխությունը:

Արժեզրկման խմբային գնահատում իրականացնելու նպատակով ֆինանսական ակտիվները խմբավորվում են միատարր խմբերի Կազմակերպության ներքին ընթացակարգերի հիման վրա, որոնք կարող են հաշվի առնել ֆինանսական ակտիվների այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են՝ ակտիվի տեսակը, ժամկետանց կարգավիճակը, վարկառուի գործունեության ճյուղը և այլ գործոններ:

Վարկերի խմբային գնահատման նպատակով Կազմակերպությունը դիտարկել է հետևյալ խմբերը՝

- մինչև 5 մլն դրամ գումարով և մինչև 1 տարի տևողությամբ վարկեր, որոնք ապահովված են թանկարժեք մետաղներով,
- մինչև 5 մլն դրամ գումարով, 1 տարի և ավել տևողությամբ վարկեր, որոնք ապահովված են թանկարժեք մետաղներով,
- մինչև 5 մլն դրամ գումարով վարկեր, որոնք ապահովված են այլ գրավներով,
- 5 մլն դրամ և ավել գումարով վարկեր:

Պահուստի գումար¹ առ 31.12.18թ., ՀՀ դրամ

| | Կոլեկտիվ գնահատման խմբերը | | | | | | Ընդամենը |
|--------|---------------------------|---------------------|----------------------|--------------------|---------------------|-----------|-----------|
| | <5.0 մլն այլ գրավով | <5.0 մլն ոսկով <365 | <5.0 մլն ոսկով >=365 | >=5.0 մլն. Դրամ | | | |
| | | | | կոլեկտիվ գնահատված | անհատապես գնահատված | ընդամենը | |
| I փուլ | 636 563 | 340 052 | 1 576 751 | 4 962 093 | - | 4 962 093 | 7 515 458 |

¹ Առանց 100% -ով պահուստավորված վարկերի պահուստի:

| | | | | | | | |
|--------------------------|---------|---------|-----------|-----------|------------|------------|------------|
| II փուլ, ռիսկի ավելացում | 19 173 | 56 932 | 99 306 | 39 165 | - | 39 165 | 214 575 |
| III փուլ, արժեզրկված | - | - | - | - | 51 084 064 | 51 084 064 | 51 084 064 |
| Ընդամենը | 655 736 | 396 984 | 1 676 056 | 5 001 257 | 51 084 064 | 56 085 322 | 58 814 098 |

Պահուստի գումար առանց 100% պահուստավորման առ 30.09.18թ., ՀՀ դրամ

| | Կոլեկտիվ գնահատման խմբերը | | | | | | Ընդամենը |
|--------------------------|---------------------------|---------------------|----------------------|--------------------|---------------------|------------|------------|
| | <5.0 մլն այլ գրավով | <5.0 մլն ոսկով <365 | <5.0 մլն ոսկով >=365 | >=5.0 մլն. Դրամ | | | |
| | | | | Կոլեկտիվ գնահատված | անհատապես գնահատված | ընդամենը | |
| I փուլ | 547 885 | 365 075 | 1 614 172 | 5 117 350 | - | 5 117 350 | 7 644 482 |
| II փուլ, ռիսկի ավելացում | 259 688 | 22 919 | 128 525 | 17 561 | - | 17 561 | 428 693 |
| III փուլ, արժեզրկված | - | - | - | - | 47 908 877 | 47 908 877 | 47 908 877 |
| Ընդամենը | 807 573 | 387 995 | 1 742 697 | 5 134 910 | 47 908 877 | 53 043 788 | 55 982 052 |

Պահուստի գումար առանց 100% պահուստավորման առ 30.06.18թ., ՀՀ դրամ

| | Կոլեկտիվ գնահատման խմբերը | | | | | | Ընդամենը |
|--------------------------|---------------------------|---------------------|----------------------|--------------------|---------------------|------------|------------|
| | <5.0 մլն այլ գրավով | <5.0 մլն ոսկով <365 | <5.0 մլն ոսկով >=365 | >=5.0 մլն. Դրամ | | | |
| | | | | Կոլեկտիվ գնահատված | անհատապես գնահատված | ընդամենը | |
| I փուլ | 804 532 | 308 254 | 1 608 083 | 9 708 656 | - | 9 708 656 | 12 429 525 |
| II փուլ, ռիսկի ավելացում | 806 032 | 131 161 | 216 233 | 78 902 | - | 78 902 | 1 232 329 |
| III փուլ, արժեզրկված | - | - | - | - | 48 370 167 | 48 370 167 | 48 370 167 |
| Ընդամենը | 1 610 564 | 439 415 | 1 824 316 | 9 787 558 | 48 370 167 | 58 157 725 | 62 032 020 |

Պահուստի գումար առ 31.03.18թ., ՀՀ դրամ

| | Կոլեկտիվ գնահատման խմբերը | | | | | | Ընդամենը |
|--------------------------|---------------------------|---------------------|----------------------|--------------------|---------------------|------------|------------|
| | <5.0 մլն այլ գրավով | <5.0 մլն ոսկով <365 | <5.0 մլն ոսկով >=365 | >=5.0 մլն. Դրամ | | | |
| | | | | Կոլեկտիվ գնահատված | անհատապես գնահատված | ընդամենը | |
| I փուլ | 1 480 310 | 482 796 | 1 155 766 | 1 772 295 | 29 564 608 | 31 336 904 | 34 455 775 |
| II փուլ, ռիսկի ավելացում | 287 458 | 236 624 | 282 720 | 1 249 146 | 0 | 1 249 146 | 2 055 948 |

| | | | | | | | |
|-------------------------|-----------|-----------|-----------|-----------|------------|------------|------------|
| III փուլ, արժեզրկված | 0 | 292 539 | 1 249 478 | 0 | 0 | 0 | 1 542 017 |
| Ընդամենը | 1 767 768 | 1 011 958 | 2 687 964 | 3 021 441 | 29 564 608 | 32 586 050 | 38 053 739 |

Պահուստի գումար առ 31.12.17թ., ՀՀ դրամ

| | Կոլեկտիվ գնահատման խմբերը | | | | | | Ընդամենը |
|--------------------------------|---------------------------|-----------------------|----------------------------|-----------------------|------------------------|------------|------------|
| | <5.0 մլն այլ գրավով | <5.0 մլն ոսկով<365 | <5.0 մլն ոսկով >=365 | >=5.0 մլն. Դրամ | | | |
| | | | | կոլեկտիվ գնահատված | անհատապես գնահատված | ընդամենը | |
| I փուլ | 1 643 300 | 466 744 | 799 785 | 1 549 220 | 29 675 745 | 31 224 965 | 34 134 795 |
| II փուլ, ռիսկի ավելացում | 42 843 | 108 306 | 24 984 | 124 449 | 0 | 124 449 | 300 582 |
| III փուլ, արժեզրկված | 0 | 1 288 852 | 3 914 496 | 0 | 0 | 0 | 5 203 348 |
| Ընդամենը | 1 686 144 | 1 863 902 | 4 739 265 | 1 673 669 | 29 675 745 | 31 349 414 | 39 638 725 |

Պահուստի գումար առ 31.12.16թ., ՀՀ դրամ

| | Կոլեկտիվ գնահատման խմբերը | | | | | | Ընդամենը |
|--------------------------------|---------------------------|-----------------------|----------------------------|-----------------------|------------------------|------------|------------|
| | <5.0 մլն այլ գրավով | <5.0 մլն ոսկով<365 | <5.0 մլն ոսկով >=365 | >=5.0 մլն. Դրամ | | | |
| | | | | կոլեկտիվ գնահատված | անհատապես գնահատված | ընդամենը | |
| I փուլ | 435 380 | 1 019 634 | 352 795 | 1 412 335 | 28 402 510 | 29 814 845 | 31 622 654 |
| II փուլ, ռիսկի ավելացում | 2 243 | 240 656 | 59 131 | 0 | 3 213 569 | 3 213 569 | 3 515 599 |
| III փուլ, արժեզրկված | 0 | 1 903 320 | 1 323 541 | 0 | 0 | 0 | 3 226 861 |
| Ընդամենը | 437 623 | 3 163 611 | 1 735 467 | 1 412 335 | 31 616 079 | 33 028 414 | 38 365 114 |

Այն վարկերի նկատմամբ, որոնք գերազանցում են Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված անհատական գնահատման շեմը, ինչպես նաև արժեզրկված վարկերի նկատմամբ կիրառվում է անհատական մոտեցում:

Սպասվող պարտքային կորուստների գնահատումը Կազմակերպությունն իրականացրել է պատմական տվյալների, ինչպես նաև մակրոտնտեսական ցուցանիշների (օրինակ՝ տնտեսական ակտիվության ցուցանիշ, սպառողական գների ինդեքս, տրանսֆերտներ, և այլն) կանխատեսումների հիման վրա՝ հաշվի առնելով մակրոտնտեսական 4 սցենար. բազային, լավատեսական, վատատեսական և խիստ վատատեսական: Արժեզրկման պահուստի

հաշվարկի նպատակով նշված սցենարներով ստացված արդյունքները խմբավորվել են՝ հիմք ընդունելով համապատասխան տեսակարար կշիռները:

Պահուստի գումար² առ 31.12.18թ., ՀՀ դրամ

| Սցենար | I փուլ | II փուլ, ռիսկի ավելացում | III փուլ, արժեզրկված | Ընդամենը |
|------------------|-----------|--------------------------|----------------------|-------------|
| Բազային | 7 338 509 | 207 993 | 26 044 471 | 33 590 973 |
| Լավատեսական | 7 024 124 | 196 558 | 2 812 107 | 10 032 789 |
| Վատատեսական | 7 658 871 | 219 761 | 67 660 844 | 75 539 476 |
| Խիստ վատատեսական | 7 992 370 | 232 234 | 103 001 976 | 111 226 580 |
| Միջին | 7 515 458 | 214 575 | 51 084 064 | 58 814 098 |

**Պահուստի գումար ըստ սցենարների առանց 100% պահուստավորման
առ 30.09.18թ., ՀՀ դրամ**

| Սցենար | I փուլ | II փուլ, ռիսկի ավելացում | III փուլ, արժեզրկված | Ընդամենը |
|------------------|-----------|--------------------------|----------------------|-------------|
| Բազային | 7 426 604 | 417 142 | 25 348 546 | 33 192 293 |
| Լավատեսական | 6 990 146 | 393 249 | 2 207 118 | 9 590 513 |
| Վատատեսական | 7 870 857 | 441 178 | 66 946 268 | 75 258 304 |
| Խիստ վատատեսական | 8 352 189 | 466 481 | 102 269 576 | 111 088 246 |
| Միջին | 7 644 482 | 428 693 | 47 908 877 | 55 982 052 |

² Առանց 100% -ով պահուստավորված վարկերի պահուստի:

**Պահուստի գումար ըստ սցենարների առանց 100% պահուստավորման
առ 30.06.18թ., ՀՀ դրամ**

| Սցենար | I փուլ | II փուլ, ռիսկի ավելացում | III փուլ, արժեզրկված | Ընդամենը |
|------------------|------------|-----------------------------|-------------------------|-------------|
| Բազային | 12 213 397 | 1 210 737 | 25 588 263 | 39 012 398 |
| Լավատեսական | 11 779 002 | 1 166 163 | 2 508 644 | 15 453 809 |
| Վատատեսական | 12 653 885 | 1 255 539 | 67 116 684 | 81 026 109 |
| Խիստ վատատեսական | 13 116 443 | 1 301 277 | 102 382 523 | 116 800 243 |
| Միջին | 12 429 525 | 1 232 329 | 48 370 167 | 62 032 020 |

Ընդհանուր մոտեցման շրջանակներում առանձնացվում է վարկերի արժեզրկման 3 փուլ.

ա) առաջին փուլ, որը վերաբերում է այն ակտիվներին, որոնց պարտքային որակը սկզբնական ճանաչումից հետո էապես չի նվազել, կամ որոնց նկատմամբ կիրառվել է Ցածր վարկային ռիսկի հետ կապված պարզեցման մոտեցում,

բ) երկրորդ փուլ, որը վերաբերում է այն ակտիվներին, որոնց գծով սկզբնական ճանաչումից հետո արձանագրվել է Պարտքային ռիսկի էական ավելացում, սակայն վարկային կորստի վերաբերյալ օբյեկտիվ տվյալներ չկան,

գ) երրորդ փուլ, որը վերաբերում է այն ակտիվներին, որոնց գծով առկա են արժեզրկման վերաբերյալ օբյեկտիվ վկայություններ:

Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանվում են այն չափանիշները, որոնց առկայության դեպքում երրորդ և երկրորդ փուլում գտնվող վարկերը կարող են վերադասակարգվել առաջին փուլ:

Առաջին փուլում գտնվող վարկերի համար ճանաչվում է 12 ամսվա սպասվող պարտքային կորուստ, իսկ երկրորդ և երրորդ փուլերի վարկերի համար՝ ամբողջ ժամկետի համար հաշվարկված սպասվող պարտքային կորուստ:

Կազմակերպությունը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկի զսպման նպատակով: Տվյալ միջոցների թվում կարևոր տեղ է զբաղեցնում վարկերի վերադարձի ապահովումը գրավով և ապահովման այլ տեսակի

միջոցներով: Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանվում են յուրաքանչյուր վարկատեսակի համար ընդունելի ապահովման միջոցները, դրանց գնահատման և փաստաթղթավորման կարգը: Կազմակերպության հիմնական ապահովման միջոցներն են թանկարժեք իրերի և անշարժ գույքի գրավը, ինչպես նաև երաշխավորությունները: Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է վարկային պորտֆելի բաշխումն ըստ առանձին ապահովման միջոցների:

Վարկերի ապահովվածության վերլուծություն³ առ 31.12.18թ.

| Հիմնական ապահովման միջոց | Վարկային պորտֆել ներկա արժեքով, ՀՀ դրամ | Պահուստի գումար, ՀՀ դրամ | Տվյալ ապահովման միջոցով ապահովված վարկային պորտֆելի մասնաբաժին |
|--------------------------|---|--------------------------|--|
| անշարժ | 1 139 374 493 | 53 450 460 | 26,41% |
| ոսկի | 2 212 992 567 | 3 008 588 | 51,30% |
| երաշխավորություն | 912 258 069 | 2 143 460 | 21,15% |
| փոխադրամիջոց | 26 829 292 | 110 879 | 0,62% |
| իրավունքի գրավ | 17 474 019 | 83 262 | 0,41% |
| այլ գրավ | 3 264 379 | 7 561 | 0,08% |
| գրավ չկա | 2 026 173 | 9 888 | 0,05% |
| Ընդամենը | 4 314 218 992 | 58 814 098 | 100,00% |

Պարտքային ֆինանսական ակտիվների գծով, որոնց հիմքում ընկած պայմանագրի երկրորդ կողմը հանդիսանում է ֆինանսական կազմակերպություն կամ պետություն, պահուստի հաշվարկման համար Կազմակերպությունը գնահատել է նշված ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը՝ հիմնվելով մի խումբ՝ ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական ցուցանիշների վրա, իսկ պետության դեպքում հաշվի է առնվել Մուդիզ վարկանիշային գործակալության կոմից տրվող՝ երկարաժամկետ արտարժույթային պարտատոմսերի վարկանիշները:

³ 100% -ով պահուստավորված վարկերը ներառված չեն:

Այլ ֆինանսական ակտիվների գծով պահուստ, ՀՀ դրամով

| | 31.12.17թ. | | 31.12.18թ. | |
|-------------------|-------------------|------------|------------------|------------|
| | Գումար | Պահուստ | Գումար | Պահուստ |
| Բանկային հաշիվներ | 57 797 325 | 246 577 | 22 132 025 | 51 264 |
| Բանկային ավանդներ | 2,651,567,51 1 | 14,660 376 | 5 313 464 878 | 12 365 668 |
| Պետական արժեթղթեր | 1 401 716 787 | 21 739 785 | 1 013 756 865 | 16 486 568 |

Վերը նշված ֆինանսական ակտիվները անհատապես արժեզրկված կամ ժամկետանց չեն:

Հաշվետվության օրվա դրությամբ Կազմակերպությունը չունի ձեռքբերված կամ սկզբնապես արժեզրկված ակտիվ:

Վարկերի ապահովվածության վերլուծություն առ 30.09.18թ.

(առանց 100% պահուստավորման)

| Հիմնական ապահովման միջոց | Վարկային պորտֆել ներկա արժեքով, ՀՀ դրամ | Պահուստի գումար, ՀՀ դրամ | Տվյալ ապահովման միջոցով ապահովված վարկային պորտֆելի մասնաբաժին |
|--------------------------|---|--------------------------|--|
| անշարժ | 1 150 273 528 | 50 329 445 | 26,15% |
| ոսկի | 2 124 644 973 | 2 917 773 | 48,31% |
| Երաշխավորություն | 1 062 655 477 | 2 502 594 | 24,16% |
| փոխադրամիջոց | 27 916 611 | 101 845 | 0,63% |
| իրավունքի գրավ | 20 131 070 | 84 547 | 0,46% |
| այլ գրավ | 9 441 779 | 21 843 | 0,21% |
| գրավ չկա | 3 097 150 | 24 005 | 0,07% |
| Ընդամենը | 4 398 160 587 | 55 982 052 | 100,00% |

**Վարկերի ապահովվածության վերլուծություն առ 30.06.18թ.
(առանց 100% պահուստավորման)**

| Հիմնական ապահովման միջոց | Վարկային պորտֆել ներկա արժեքով, ՀՀ դրամ | Պահուստի գումար, ՀՀ դրամ | Տվյալ ապահովման միջոցով ապահովված վարկային պորտֆելի մասնաբաժին |
|--------------------------|---|--------------------------|--|
| անշարժ | 2 815 238 749 | 55 138 741 | 45,49% |
| ոսկի | 2 012 986 664 | 3 120 508 | 32,53% |
| երաշխավորություն | 1 293 108 026 | 3 481 290 | 20,90% |
| փոխադրամիջոց | 29 042 388 | 149 746 | 0,47% |
| իրավունքի գրավ | 24 571 351 | 104 798 | 0,40% |
| այլ գրավ | 10 665 519 | 25 239 | 0,17% |
| գրավ չկա | 2 408 317 | 11 697 | 0,04% |
| Ընդամենը | 6 188 021 013 | 62 032 020 | 100,00% |

Պահուստի գումար ըստ սցենարների առ 31.12.17թ., ՀՀ դրամ

| Սցենար | I փուլ | II փուլ, ռիսկի ավելացում | III փուլ, արժեզրկված | Ընդամենը |
|------------------|------------|--------------------------|----------------------|------------|
| Բազային | 31 392 894 | 238 984 | 5 203 348 | 36 835 226 |
| Լավատեսական | 25 980 541 | 168 434 | 5 203 348 | 31 352 323 |
| Վատատեսական | 39 084 840 | 393 451 | 5 203 348 | 44 681 639 |
| Խիստ վատատեսական | 45 547 559 | 539 542 | 5 203 348 | 51 290 449 |
| Միջին | 34 134 795 | 300 582 | 5 203 348 | 39 638 725 |

Ընդհանուր մոտեցման շրջանակներում առանձնացվում է վարկերի արժեզրկման 3 փուլ.

ա) առաջին փուլ, որը վերաբերում է այն ակտիվներին, որոնց պարտքային որակը սկզբնական ճանաչումից հետո էապես չի նվազել, կամ որոնց նկատմամբ կիրառվել է Ցածր վարկային ռիսկի հետ կապված պարզեցման մոտեցում,

բ) երկրորդ փուլ, որը վերաբերում է այն ակտիվներին, որոնց գծով սկզբնական ճանաչումից հետո արձանագրվել է Պարտքային ռիսկի էական ավելացում, սակայն վարկային կորստի վերաբերյալ օբյեկտիվ տվյալներ չկան,

գ) երրորդ փուլ, որը վերաբերում է այն ակտիվներին, որոնց գծով առկա են արժեզրկման վերաբերյալ օբյեկտիվ վկայություններ:

Պահուստի գումարի փոփոխությունն ըստ վարկային պորտֆելի փուլերի

| | 31.12.16թ. | 31.12.17թ. | 31.03.18թ. |
|--------------------------|------------|------------|------------|
| I փուլ | 31 622 654 | 34 134 795 | 34 455 775 |
| II փուլ, ռիսկի ավելացում | 3 515 599 | 300 582 | 2 055 948 |
| III փուլ, արժեզրկված | 3 226 861 | 5 203 348 | 1 542 017 |
| Ընդամենը | 38 365 114 | 39 638 725 | 38 053 739 |

Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանվում են այն չափանիշները, որոնց առկայության դեպքում երրորդ և երկրորդ փուլում գտնվող վարկերը կարող են վերադասակարգվել առաջին փուլ:

Պահուստի գումարի փոփոխությունն ըստ կողեկտիվ գնահատման խմբերի

| Կողեկտիվ գնահատման խմբերը | 31.12.16թ. | 31.12.17թ. | 31.03.18թ. |
|---------------------------|------------|------------|------------|
| <5.0 մլն այլ գրավով | 437 623 | 1 686 144 | 1 767 768 |
| <5.0 մլն ոսկով<365 | 3 163 611 | 1 863 902 | 1 011 958 |
| <5.0 մլն ոսկով>=365 | 1 735 467 | 4 739 265 | 2 687 964 |
| >=5.0 մլն. դրամ | 33 028 414 | 31 349 414 | 32 586 050 |
| Ընդամենը | 38 365 114 | 39 638 725 | 38 053 739 |

Առաջին փուլում գտնվող վարկերի համար ճանաչվում է 12 ամսվա սպասվող պարտքային կորուստ, իսկ երկրորդ և երրորդ փուլերի վարկերի համար՝ ամբողջ ժամկետի համար հաշվարկված սպասվող պարտքային կորուստ:

Կազմակերպությունը կիրառում է բազմաթիվ միջոցներ վարկային ռիսկի զսպման նպատակով: Տվյալ միջոցների թվում կարևոր տեղ է զբաղեցնում վարկերի վերադարձի

ապահովումը գրավով և ապահովման այլ տեսակի միջոցներով: Կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանվում են յուրաքանչյուր վարկատեսակի համար ընդունելի ապահովման միջոցները, դրանց գնահատման և փաստաթղթավորման կարգը: Կազմակերպության հիմնական ապահովման միջոցներն են թանկարժեք իրերի և անշարժ գույքի գրավը և երաշխավորությունները: Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է վարկային պորտֆելի բաշխումն ըստ առանձին ապահովման միջոցների, ինչպես նաև ապահովման տեսակների ռիսկայնության աստիճանը:

Վարկերի ապահովվածության վերլուծություն առ 31.03.18թ.

| Հիմնական ապահովման միջոց | Վարկային պորտֆել ներկա արժեքով, ՀՀ դրամ | Պահուստի գումար, ՀՀ դրամ | Տվյալ ապահովման միջոցով ապահովված վարկային պորտֆելի մասնաբաժին |
|--------------------------|---|--------------------------|--|
| անշարժ | 2 536 809 206 | 17 512 129 | 42,17% |
| ոսկի | 1 898 263 854 | 4 660 821 | 31,56% |
| երաշխավորություն | 1 525 627 645 | 15 495 715 | 25,36% |
| փոխադրամիջոց | 25 364 772 | 162 425 | 0,42% |
| իրավունքի գրավ | 23 052 119 | 192 537 | 0,38% |
| այլ գրավ | 6 230 668 | 25 440 | 0,10% |
| գրավ չկա* | 109 071 | 4 672 | 0,00% |
| Ընդամենը | 6 015 457 336 | 38 053 739 | 100,00% |

*-վարկեր, որոնց գրավները վաճառվել են

Վարկերի ապահովվածության վերլուծություն առ 31.12.17թ.

| Հիմնական ապահովման միջոց | Վարկային պորտֆել ներկա արժեքով, ՀՀ դրամ | Պահուստի գումար, ՀՀ դրամ | Տվյալ ապահովման միջոցով ապահովված վարկային պորտֆելի մասնաբաժին |
|--------------------------|---|--------------------------|--|
| անշարժ | 2 546 782 529 | 13 769 803 | 41,04% |
| երաշխավորություն | 1 805 155 579 | 18 291 033 | 29,09% |
| ոսկի | 1 790 358 484 | 7 176 215 | 28,85% |
| փոխադրամիջոց | 29 442 600 | 121 362 | 0,47% |
| իրավունքի գրավ | 24 614 767 | 250 623 | 0,40% |
| այլ գրավ | 8 760 139 | 29 049 | 0,14% |
| գրավ չկա* | 115 933 | 639 | 0,00% |
| Ընդամենը | 6 205 230 031 | 39 638 725 | 100,00% |

*-վարկեր, որոնց գրավները վաճառվել են

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ՇՀՄՍ 9
 Ֆինանսական գործիքներ ստանդարտը, որն ուժի մեջ է մտել 2018 թ. հունվարի 1-
 ից սկսած ժամանակահատվածների համար: Հետևելով ՀՀՄՍ 8 -
 Հաշվապահական հաշվառման քաղաքականության,
 փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում նախալներ ստանդարտի 22-
 րդ պարագրաֆի պահանջներին՝ ՇՀՄՍ 9 կետերում ներկայացրել է նախորդ ժամանակաշրջանի ֆին-
 նանսական հաշվետվությունները՝ համաձայն ՇՀՄՍ 9
 Ֆինանսական գործիքներ ստանդարտի կիրառման անցումային դրույթներին:
 Ստորև ներկայացված է հետադարձ
 ճշգրտումների ցանկը՝ համապատասխան մեկնաբանություններով:

(ա) 2016 թ. դեկտեմբերի 31-

ինավարտված տարվա համար ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ճշգրտումներ

| | Ներկայացված 31.12.16 | Ճշգրտումներ | | | Վերաներկայացված 31.12.16 |
|--|-------------------------|---------------|---------------|---------------|-----------------------------|
| | | (i) | (ii) | (iii) | |
| | հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ | հազար դրամ |
| Ակտիվներ | | | | | |
| Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ | 15,377 | | | | 15,377 |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | 1,932,549 | | | | 1,932,549 |
| Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխատվություններ | 6,252,630 | 1,134 | 35,921 | | 6,289,685 |
| Վաճառքի համար նախատեսված ներդրումներ | 1,311,994 | | | | 1,311,994 |
